

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/
КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО**

<https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-20>

ԼԻԼԻԹ ՎԱՐԱԳՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ,
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
իրավաբանական վարչության իրավաբան*

LILIT VARAGYAN

*Applicant at the Chair of Constitutional Law
of the Faculty of Law of Yerevan State University,
Lawyer of the Legal Department
of the Central Electoral Commission*

ЛИЛИТ ВАРАГЯН

*Соискатель кафедры конституционного права
юридического факультета Ереванского
государственного университета,
юрист юридического департамента
Центральной избирательной комиссии*

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ**

**ADMINISTRATION AND ADMINISTRATIVE PROCEEDINGS IN
PRECINCT ELECTORAL COMMISSIONS**

**АДМИНИСТРИРОВАНИЕ И АДМИНИСТРАТИВНОЕ
ПРОИЗВОДСТВО В УЧАСТКОВЫХ ИЗБИРАТЕЛЬНЫХ КОМИССИЯХ**

Ներածություն

Ազատ ժողովրդավարական ընտրությունները սահմանադրական կարգի հիմունքների կայացման և զարգացման գործում առանձնահատուկ դեր ունեն, և այս տեսանկյունից հարցն ունի ընդգրկման լայն շրջանակ: Այն վերաբերում է ընտրությունների հանրային գործառնության այնպիսի հարցադրումների, ինչպիսիք են՝ ա) ինչ կերպ և ինչպիսիք վստահությամբ է ձևա-

վորվում ներկայացուցչական կառավարման համակարգը, բ) ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը և ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, դ) ինչպիսին է անհատների հասարակական վարքագիծն այդ գործընթացում:

Ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության առաջնահերթ պարտավորությունն է, հետևաբար, պետությունը պարտավոր է ստեղծել հուսալի երաշխիքներ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավաչափ հավասարակշռության ապահովման նպատակով, որոնցից ամենակարևորներից է ընտրական հանձնաժողովների ստեղծումն ու նրանց անկախության երաշխավորումը: Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» 3.1. կետում ամրագրված է. «Միայն թափանցիկությունը, անկողմնակալությունն ու քաղաքականորեն պատճառաբանված մանիպուլյացիայից անկախությունը կապահովեն ընտրական գործընթացի ճիշտ վարչարարություն՝ նախընտրական փուլից մինչև արդյունքների ստացումը: Ահա թե ինչո՞ւ պետք է կազմավորվեն անկախ, անկողմնակալ ընտրական հանձնաժողովներ՝ ազգային մակարդակից մինչև ընտրատեղամասի մակարդակ»¹:

Ըստ այդմ էլ՝ նպատակահարմար ենք համարում հետազոտության առարկա դարձնել հետևյալ հարցադրումները՝

1) արդյո՞ք տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվում է դասական իմաստով վարչարարություն և վարչական վարույթ,

2) տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ընդհանուր կանոններով, թե՛ էական առանձնահատկություններով:

Բերված հարցադրումների հստակեցումը, հատկապես կարևոր է հետևյալ նպատակներին հասնելու համար.

- տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող գործառույթների իրավական ձևակերպման տեսանկյունից իրավական որոշակիության սկզբունքի էությանը համապատասխանեցնելու,

- տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին, նիստերին, քվեարկության օրը, արդյունքների ամփոփմանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները պաշտպանելու տեսանկյունից իրավական երաշխիքների ապահովման,

- կոնկրետ օրենսդրական ակտերով սահմանված իրավակարգավորումների սահմաններում ընտրական գործընթացի սուբյեկտների իրավունքների վարչաիրավական պաշտպանության ապահովման:

Հիմնական հետազոտություն

Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով-

¹ Տես Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք: Ցուցումներ և բացատրական զեկույց (ընդունված՝ ԵԽ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կողմից 52-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում, 2002 թ. հուլիսի 5-6 և հոկտեմբերի 18-19), Ստրասբուրգ 30.10.02 թ., կարծիք N190/2002:

ներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ, որոնք իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են և գործում են օրինականության, կոլեգիալության ու հրապարակայնության սկզբունքների հիման վրա: Ընտրական հանձնաժողովների ստորին մակարդակը տեղամասային ընտրական հանձնաժողովներն են, որոնք իրականացնում են հետևյալ լիազորությունները՝

1) կազմակերպում են ընտրությունների քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում,

2) կազմում են ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն,

3) հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակը, տեխնիկական սարքավորումները, ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը և քվետուփը ներկայացնում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով²:

Նշված լիազորությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները կարևոր դեր ունեն ընտրական գործընթացներում, քանի որ անմիջականորեն աշխատում են ընտրողի հետ, ինչպես նաև կազմակերպում են քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների արհեստավարժությունը կարևոր նախապայման է վերջիններիս կողմից քվեարկության կազմակերպվածությունն ապահովելու տեսանկյունից, որի արդյունքում ամփոփվում են ընտրության արդյունքները տվյալ տեղամասում, այսինքն, որոշվում է «ընտրապայքարում հաղթող» կողմը, ինչը հիմք է հանդիսանում, որպեսզի համապատասխան ընտրական հանձնաժողովը հրապարակի ընտրության վերջնական արդյունքները: Ընտրական գործընթացի պատշաճ ապահովման հիմքում ընկած է քվեարկության օրը տեղի ունեցող խնդիրներին օպերատիվ լուծում տալու հանգամանքը, այսինքն՝ բոլոր հարցերը պետք է լուծում ստանան տեղում, խախտումները կանխվեն, խախտված իրավունքները վերականգնվեն:

Վերը նշված խնդրի լուծման կարևորագույն գրավականներից է տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների՝ իրենց աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու անհրաժեշտության գիտակցումը, ինչին, մեր խորին համոզմամբ, մեծապես նպաստում են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորման հիմքում դրված կառուցակարգերը: Գործող կարգավորումներով տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակում են Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Օրենսդիրը, այդպիսի իրավունք վերապահելով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), միևնույն ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների անկողմնակալությունն ապահովելու նպատակով սահմանել է, որ ընտրական հանձնաժողովի անդամն ընտրական հանձնաժողովում գործում է անկախ և չի ներկայացնում իրեն նշանակողին: Չնայած օրենսդրի նշված կարգավորմանը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործելաոճում կաշկանդվածությունը, այնուամենայնիվ առկա է, ինչը շատ դեպքերում կարող է խոչընդոտել վերջիններիս լիազորությունների պատշաճ իրականացմանը: Տեղամասային ընտրական հանձնաժողովը եռաստիճան ընտրական հանձնաժողովների համակարգում

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք. ընդունվել է 2016 թ. մայիսի 25-ին. ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդ. 53:

միակն է, որն անմիջականորեն է առնչվում ընտրողի հետ և իրականացնում քվեարկությունն ու կազմակերպում ընտրական գործընթացը համապատասխան ընտրական տեղամասում, ուստի պիտի լինի ամենաանկողմնակալն ու անկախը: Հետևաբար՝ գտնում ենք, որ գիտագործնական հարթությամբ ծագել է Օրենսգրքում տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորման գործող կառուցակարգերը վերանայելու անհրաժեշտություն, մասնավորապես, հարկ է սահմանել համարժեք չափանիշներ, օրինակ, որոշակի մասնագիտական ցենզ, որոշակի կատեգորիայի անձանցից նշանակելու հնարավորություն (օրինակ, հանրային ծառայողներ և այլն) և այդ բնույթի այլ չափանիշներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվող վերը թվարկված լիազորություններն ուղեկցվում են վարչարարության և վարչական վարույթի իրականացմամբ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետի համաձայն՝ վարչարարությունը՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Այսինքն, վարչարարությունը՝

- արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է,
- եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ,
- եզրափակվում է նորմատիվ ակտի ընդունմամբ,
- գործողություն կամ անգործություն է, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վերը նշված չափանիշներից տեղամասային ընտրական հանձնաժողովների պարագայում կիրառելի չէ միայն նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ եզրափակումը: Տվյալ դեպքում թեկուզ մեկ ֆակուլտատիվ չափանիշի բացակայությունը հիմք չէ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովը չդիտվի վարչարարություն իրականացնող մարմին: Նորմատիվ իրավական ակտով եզրափակվելը վարչական ակտի ընդունումից առանձնացված է «կամ» շաղկապով, ինչը նշանակում է, որ երկու չափանիշներից թեկուզ մեկի կիրառումը բավական է, որպեսզի տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից իրականացվող գործառնությունները համարենք վարչարարության իրականացում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչարարություն է համարվում, օրինակ, հետևյալ իրավիճակը. եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է Օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Նշված դեպքում, եթե այդ հիմքով գրառում չկատարվի, ապա կնշանակի, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անգործության արդյունքում խախտվում է հանձնաժողովի անդամի, դիտորդի և վստահված անձի իրավունքները: Մեկ այլ օրինակ է հետևյալ կարգավորումը. եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վստահ է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ (Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ՝ ընտրությունների մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ): Սխալ լրացված (վստահված) քվեաթերթիկը (քվեաթերթիկները) անհապաղ մարվում են: Հանձնաժողովի կողմից այս գործառնություն չիրականացվելը և անգործություն դրսևորելը կհանգեցնի ընտրո-

դի՝ Օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ իրավունքի խախտման: Նմանատիպ օրինակները բազմաթիվ են:

Վարչարարություն իրականացնելու ևս մեկ իրավիճակ է հետևյալը. առհասարակ ընտրական հանձնաժողովներն ընտրողների ցուցակները կազմելու իրավասություն չունեն, դա իրականացնում է լիազոր մարմինը՝ բնակչության պետական ռեգիստրը վարող Կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը: Սակայն, ընտրական գործընթացի ժամկետներով և ընտրողի ընտրելու իրավունքի կարևորությամբ պայմանավորված, Օրենսգիրքը տեղամասային ընտրական հանձնաժողովին օժտել է քվեարկության օրը տեղամասում լրացուցիչ ցուցակ կազմելու լիազորությամբ, եթե ընտրողը կներկայացնի լիազոր մարմնից բերված տեղեկանքը կամ դատական ակտը, ինչի արդյունքում ընտրողին հնարավորություն է տրվում ընդգրկվելու ընտրողների լրացուցիչ ցուցակում և մասնակցելու քվեարկությանը, այսինքն, իրացնելու ընտրելու իր իրավունքը: Սա ոչ այլ ինչ է, քան դասական իմաստով վարչարարություն, որովհետև արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ցուցակը կազմելը գործողություն է, իսկ ցուցակը չկազմելը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից անգործության դրսևորում է, անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ, այսինքն, եթե ցուցակը կազմվի, ընտրողը կընդգրկվի ընտրողների ցուցակում և կիրացնի ընտրելու իր իրավունքը, իսկ եթե ցուցակը չկազմվի, ընտրողը կգրկվի քվեարկելու իր իրավունքից: Ինչպես նշված է Սահմանադրական դատարանի 2002 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-389 որոշման 10-րդ կետում՝ « ... քվեարկությանը մասնակցել, այսինքն՝ ընտրելու իրավունքն իրացնել կարող են միայն ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիները: Հետևաբար, ընտրական ցուցակներում ընդգրկվելու՝ քաղաքացու իրավունքի ճանաչումն ունի սահմանադրական նշանակություն, քանի որ այն անհրաժեշտ է ազատ ընտրությունների միջոցով ժողովրդաիշխանության իրականացման, ընդհանուր ընտրությունների անցկացման և ընտրական իրավունքի իրացման համար»³:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները կարող են ընդունել նաև բանավոր վարչական ակտեր, հաշվի առնելով, որ ընտրական գործընթացը, հատկապես՝ քվեարկության ամբողջ գործընթացը իրավիճակային է, և օպերատիվ լուծումներ են անհրաժեշտ տարբեր խնդիրներ լուծելու համար, իսկ իրավիճակային ցանկացած հարցին տրված լուծումն իր բնույթով վարչարարություն է՝ լինի դա գրավոր, թե բանավոր: Բանավոր վարչական ակտերից է, օրինակ՝ հետևյալը. եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահին իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, բայց ոչ պակաս, քան 15 ընտրող՝ ընտրողներին քվեարկության սենյակ թողնելով հերթով՝ մեկ-մեկ: Ընտրական հանձնաժողովի կողմից սույն մասի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ: Նշված գործառնության իրականացման արդյունքում գրավոր վարչական ակտ չի ընդունվում, այլ հայտարարվում է բանավոր:

Վերը նշված իրավակարգավորումների համակողմանի վերլուծության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները հանդիսա-

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2002 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-389 որոշումը (https://concourt.am/decision/decisions/63a9407b3bd63_sdv-389.htm):

նում են լիիրավ վարչարարություն իրականացնող մարմիններ:

Ընտրությունների կազմակերպումը բարդ գործընթաց է, այն իրականացվում է մի քանի տարբեր, բայց միմյանց հետ փոխկապակցված փուլերով: Ընտրական գործընթացի բոլոր փուլերում կարևոր է ընտրական իրավունքի պաշտպանության ապահովումը, որի իրականացման առանցքային ընթացակարգերից է վարչարարությունը՝ իր տարբեր բաղադրիչների իրականացմամբ ուղեկցելով գործընթացի բոլոր փուլերը: Վերջինս լայն հասկացություն է, դրանում ընդգրկվում է նաև վարչական վարույթը, որն իրականացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գործառույթներին բնորոշ առանձնահատկություններով, որոնց կանդիդատնանք հոդվածի շրջանակում:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ Օրենսգիրք) ընտրական գործընթացում իրականացվող վարչարարությանն առանձին անդրադարձ չկա: Այն առանձին անդրադառնում է միայն վարչական վարույթին, մասնավորապես, Օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»: Այս տեսանկյունից կարող ենք եզրակացնել, որ 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի կարգավորումն ավելի հիմնավորված էր և որոշակի, որովհետև, չնայած նրան, որ այդ Օրենսգրքի 45-րդ հոդվածը վերնագրված էր «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի առանձնահատկությունները», այնուամենայնիվ՝ նշված հոդվածի 1-ին մասում սահմանված էր՝ «**Ընտրական հանձնաժողովում** վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»: Իհարկե, նշված օրենսգրքի իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործունեության շրջանակներում դասական իմաստով վարչական վարույթին բնութագրական բաղադրիչներն իրենց ամբողջական դրսևորումներով հիմնականում չեն արտահայտվել, ինչպես դա տեղի է ունենում 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված Օրենսգրքով արտահայտված կանոնակարգումների շրջանակներում, այնուամենայնիվ, նախորդ ընտրական օրենսգրքի կարգավորումներն ավելի հստակ են ընդգծել տեղամասային ընտրական հանձնաժողովների դերը՝ որպես վարչական վարույթ իրականացնող մարմնի: Այսինքն, նախորդ ընտրական օրենսգրքից մեջբերված հոդվածի կարգավորումից ակնհայտ է դառնում, որ վարչական վարույթի առանձնահատկությունները տարածվում են ոչ թե կոնկրետ երկու հանձնաժողովների՝ Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների, ինչպես գործող Օրենսգրքով է, այլ **ընտրական հանձնաժողովում**, որի մեջ կարելի է դիտարկել եռաստիճան ընտրական հանձնաժողովներից յուրաքանչյուրին: Հենց այս իրավական անորոշությունը հաշվի առնելով է, որ հոդվածի ուսումնասիրության հիմքում առաջադրել ենք վերը թվարկված հարցադրումները:

Վերը նշված հարցին անդրադառնանք նաև գործնական հարթությամբ: Ընտրական իրավունքի բնագավառի պրակտիկ իրավաբանների շրջանակներում առկա է տարաբնույթ մոտեցում, ըստ որի՝ տեղամասային ընտրական հանձնաժողովները վարչական վարույթ իրականացնող մարմիններ չեն:

Ինչևէ, անցնելով տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վար-

չարարությանն ու վարչական վարույթին, հարկ է, նախ, ուշադրություն դարձնել Օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված կարգավորմանը, որով օրենսդիրը, ինչպես արդեն նշվեց, որպես վարչական վարույթ իրականացնող սուբյեկտների, դիտարկել է միայն Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին:

Հնարավոր է, օրենսդիրն այս տրամաբանությունը պայմանավորել է ընտրական հանձնաժողովների մշտական հիմունքներով գործել-չգործելու հանգամանքով, այն է՝ Օրենսգրքը մշտական հիմունքներով գործող **պետական մարմիններ** է սահմանել Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովի համար **պետական մարմին** լինելը կամ չլինելը չի սահմանել: Օրենսգրքով տեղամասային ընտրական հանձնաժողովներին պետական մարմնի կարգավիճակ ունենալու կամ չունենալու մասին առանձին չկարգավորելով օրենսդիրը չի անդրադարձել նաև վերջիններիս՝ վարչական մարմին հանդիսանալու հանգամանքին՝ չնայած, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները դասական իմաստով վարչարարություն իրականացնող մարմիններ են: Օրենքը վարչական մարմին հանդիսանալու հանգամանքը պայմանավորել է հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող **պետական մարմնի** կարգավիճակ ունենալու հանգամանքով: Տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ վարչական մարմնի, հետևաբար, նաև պետական մարմնի կարգավիճակ ունենալու հանգամանքը, պայմանավորված է նրանով, որ վերջիններս՝ հանրային գործառույթ են իրականացնում, իրենց լիազորություններն ստանում են պետությունից, այդ լիազորություններն իրականացնում են պետության անունից, տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների համար պատասխանատվություն է կրում պետությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգավիճակը պարզելու համար, նախ, անդրադառնանք պետական մարմնի սահմանմանը: Այս հարցում միատեսակ մոտեցում չկա: Բացակայում է նաև հստակ իրավական հիմքը: Գիտնականների մեծ մասը պետական մարմնի սահմանումը տալիս են՝ հիմք ընդունելով պետության կողմից սահմանած խնդիրներն և գործառույթները: Գիտնականների մի մասը կարծում է, որ «պետական մարմինը պետաիշխանական լիազորություններով օժտված քաղաքացին կամ քաղաքացիների խումբն է, որը պետության կողմից լիազորված է իրականացնելու իր խնդիրներն ու գործառույթները և գործում է պետության կողմից սահմանած կարգով»⁴: Այս սահմանման առավելությունն այն է, որ այն մատնանշում է լիազորությունների իրավական բնույթը, դրանց իրականացման սահմանները, պետական մարմնի գործառույթային նշանակությունը և գործունեության նպատակները: Ս. Ա. Ավակյանը, հստակեցնելով բերված սահմանումը, նշել է. «Պետական մարմինը քաղաքացիների խումբ (կոլեկտիվ) կամ մեկ քաղաքացի է, որին վստահված է պետության խնդիրների և գործառույթների իրականացումը. մարմինը սահմանված կարգով կազմավորված է սահմանադրությամբ կամ օրենքով, օժտված է համապատասխան լիազորություններով, գործում է օրենքով սահմանված կարգով, ընդունում է անհրաժեշտ իրավական ակտեր և իր գործողության համար պատասխանատու է ժողովրդի և պետության առաջ»⁵:

Մեկ այլ մոտեցում է առաջարկել պրոֆեսոր Ս. Պոպովիչը, այն է՝ օգտագործել «պետական մարմին» եզրույթն օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով: Այս դիրքորոշումը սերտորեն կապված է կառուցվածքային մոտեցման հետ, քանի որ «սուբյեկտիվ իմաստով պետական մարմին ասելիս՝ հասկանում ենք պետական ծառայություն իրականացնող ֆիզիկական ան-

⁴ См Козлова, Е.И., Кутафин О.Е., Конституционное право России: Учебник. М., Юрист, 1995, էջ 294:

⁵ См Авакьян С.А., Конституционное право России: Учебный курс. В 2 т., Т. 1, М., Юрист, 2005, էջ 336:

ծանց: Օրբելտիվ իմաստով պետական մարմին ասելիս՝ հասկանում ենք ծառայության մեջ գտնվող անձանց խումբ (կոլեկտիվ), որը միավորված է մեկ կազմակերպչական ամբողջության մեջ, դիտարկվում է մեկ հավաքական գործունեություն իրականացնելով, որի միջոցով պետությունն իրականացնում է իր գործառույթները»⁶:

Վ. Ն. Խրոպանյուկը պետական մարմինը բնորոշել է այսպես՝ «Պետության մարմինը օրենքին համապատասխան սեփական կառուցվածք, հասարակական կյանքի կոնկրետ ոլորտի կառավարման խիստ որոշակի լիազորություններ ունեցող և մեկ ամբողջություն կազմող, պետական մեխանիզմի մյուս մասերի հետ օրգանապես փոխազդեցության մեջ գտնվող պետության մեխանիզմի հիմնական մասն է»⁷:

Օ. Ա. Կոլոտկինան, Ա. Ս. Մորոզովան և Ի. Դ. Յագոֆարովան նշել են, որ պետական մարմինների դասակարգումը կարող է իրականացվել տարբեր հիմքերով՝ ըստ ծագման եղանակի, ըստ իրավասության շրջանակի, ըստ քանակական կազմի և այլն: **Ըստ ծագման եղանակի**՝ պետական մարմինները բաժանվում են՝ 1) առաջնային մարմինների, որոնք ձևավորվում են ընտրվելու միջոցով, 2) ածանցյալ մարմինների, որոնք ստեղծվում են առաջնային մարմինների կողմից նշանակվելու միջոցով և հենց այդ մարմիններն էլ նրանց վերապահում են իշխանական լիազորություններ: **Ըստ իրավասության շրջանակի**՝ առանձնացվում են՝ 1) ընդհանուր իրավասությամբ օժտված մարմինների, որոնք կոչված են լուծելու հարցերի լայն շրջանակ, 2) հատուկ իրավասությամբ օժտված մարմինների, որոնք մասնագիտանում են կոնկրետ մեկ գործառույթի իրականացման վրա: **Ըստ քանակական կազմի**՝ պետական մարմինները տարբերակվում են՝ 1) միանձնյա, 2) կոլեգիալ⁸:

Անկախ նրանից, որ Օրենսգրքում բառացիորեն անդրադարձ չկա տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ պետական մարմնի կարգավիճակով օժտված լինելու հանգամանքին, այնուամենայնիվ, նույն Օրենսգրքով սահմանված լիազորությունների ծավալը և պետական մարմնի վերը հիշատակված սահմանումներն ու չափանիշները, ինչպես նաև գիտագործնական հարթությամբ ձևավորված ընդհանուր չափանիշները թույլ են տալիս եզրակացնելու, որ վերջինս հանդիսանում է պետական մարմին, որը գործում է ժամանակավոր հիմունքներով և, անկախ այն հանգամանքից, տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպվող քվեարկությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության, թե համապետական բնույթի ընտրության քվեարկություն է, համընդգրկուն է:

Այնուամենայնիվ, անգամ այս դեպքում օրենսդիրը պիտի հաշվի առներ այն, որ և՛ նախկին օրենսգրքով, և՛ հատկապես, գործող Օրենսգրքի ընդունումից հետո, Օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներով, տեղամասային ընտրական հանձնաժողովները ևս համարվում են վարչարարություն և վարչական վարույթ իրականացնող մարմիններ, որում համոզվելու համար, վերլուծություն կատարենք վարչական վարույթի էության համատեքստում: Այսպես, Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է»⁹: Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով տրված է վարչական ակտի սահմանումը, որի համաձայն՝ «Վարչական ակտն արտաքին

⁶ Տե՛ս Попович С., Административное право. Общая часть. М.: Прогресс, 1968. էջ 15:

⁷ Տե՛ս Խրոպանյուկ Վ. Ն., «Պետության և իրավունքի տեսություն» (2-րդ հրատարակություն, լրացումներով, ուղղումներով), «Գոշ հրատարակչություն», Երևան 1997, էջ 168:

⁸ Տե՛ս Колоткина О. А., Морозова А. С., Ягофарова И. Д., Теория государства и права: Учебное пособие. Москва: Инфра-М, 2021. էջ 150-151:

⁹ Տե՛ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. ընդունվել է 2004 թ. փետրվարի 18-ին. ՀՀՊՏ 2004.03.31/18(317):

ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»։ Այսինքն, ըստ Օրենքի 53-րդ հոդվածի՝ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները՝

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր, վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից, վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

- վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար¹⁰:

Եթե հիմք ընդունենք Օրենքի 19-րդ հոդվածով տրված վարչական վարույթի, ինչպես նաև Օրենքի 53-րդ հոդվածով տրված վարչական ակտի սահմանումները, ապա կարող ենք արձանագրել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները ևս իրականացնում են վարչական վարույթ, հետևյալ հիմնավորմամբ՝

- ա) Օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընդունում են արտաքին ներգործության անհատական իրավական ակտեր,

- բ) Օրենքի 53-րդ հոդվածի վերը նշված չափանիշների վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդունած մի շարք անհատական իրավական ակտեր համարվում են վարչական ակտեր:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ընդունվող՝ վերը նշված անհատական իրավական ակտերի շարքում պետք է առանձնացնել հետևյալները՝

- դիտորդը, վստահված անձը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ծայնների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ կարող են հեռացվել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից,

- եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության մի-

¹⁰ Տե՛ս Ռոբերտ Հովհաննիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97968>):

ջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը,

- հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը խախտելու, ինչպես նաև Հանձնաժողովի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում՝ վստահված անձի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի, դիտորդի նկատմամբ կիրառվում է նախազգուշացում¹¹ և այլն:

Վերոգրյալը թույլ է տալիս պնդելու, որ սույն հոդվածում ներկայացված հարցադրմանն առ այն, որ «արդյո՞ք տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվում է դասական իմաստով վարչարարություն և վարչական վարույթ», կարելի է տալ դրական պատասխան:

Անդրադառնալով հոդվածում ներկայացված այն հարցադրմանը, որ «տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ընդհանուր կանոններով, թե՛ էական առանձնահատկություններով», ուսումնասիրենք տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներն իրենց գործառույթներն իրականացնում են նիստերի միջոցով, որոնք հիմնականում հերթական նիստեր են ու, եթե համարակալենք, կստացվի 4 հերթական նիստ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր գործառույթներն իրականացվում են խիստ սեղմ ժամկետներում, քանի որ ձևավորվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ քան 25 օր առաջ (արտահերթ ընտրությունների դեպքում այս ժամկետներն էլ ավելի սեղմ են), և տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները դադարում են ընտրության արդյունքները ամփոփվելուց 7 օր հետո (բացառությամբ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքի): Վերը թվարկված բոլոր անհատական իրավական ակտերը, ի տարբերություն Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվող վարչական վարույթների արդյունքում ընդունված անհատական իրավական ակտերի, կայացվում են հետևյալ առանձնահատկություններով, որոնք տարբերվում են նաև Օրենսգրքով սահմանված կարգավորումներից՝

- սուբյեկտային կազմը: Օրենսգիրքը Ընտրական հանձնաժողովի կողմից կայացվող ակտի հասցեատեր է համարում միայն համապատասխան կարգավիճակով օժտված կոնկրետ անձին՝ վստահված անձին, դիտորդին կամ այցելուին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցչին և այլն: Ընտրական գործընթացում որևէ կարգավիճակ չունեցող սուբյեկտի վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովը ակտ չի կարող կայացնել,

- նշված անհատական իրավական ակտերն ընդունելու համար առանձին նիստ չի գումարվում, այլ հանձնաժողովի նիստի, իսկ քվեարկության օրը՝ հենց քվեարկության ընթացքում է կազմակերպվում քվեարկությունը,

- տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերը

¹¹ Տե՛ս Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգն ընդունելու մասին» N 36-Ն որոշման գլուխ 4, կետ 34:

համառոտ չեն արձանագրվում, այլ որոշումն ամբողջությամբ ընդունվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառելու միջոցով,

- տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց կողմ կամ դեմ քվեարկությունն արձանագրում են գրանցամատյանում՝ իրենց անունների դիմաց «կողմ եմ» կամ «դեմ եմ» բառերը գրելով,

- վարչական վարույթի մասնակիցները չեն ծանուցվում հարցի քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովի համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու միջոցով կամ հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ծանուցում փակցնելու միջոցով, այլ ծանուցվում են տեղում, երբ հանձնաժողովը հայտարարում է վերը նշված իրավական ակտերը կամ ակտերից որևէ մեկն ընդունելու մտադրության մասով քվեարկություն կազմակերպելու մասին,

- վարչական վարույթի մասնակցին կամ մասնակիցներին ընդունված վարչական ակտը չի առաքվում և առձեռն չի հանձնվում, այլ վերջիններս կարող են լուսանկարել, տեսանկարահանել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի համապատասխան էջը,

- լուծման չեն անցկացվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, հատկապես, քվեարկության ընթացքում վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը հրատապությունն է և իրավիճակին օպերատիվ լուծում տալու խնդիր կա,

- ակտն ուժի մեջ է մտնում տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը կայացնելու պահից, թեև Օրենսգրքում այս մասին նշվում է անուղղակիորեն: Այսպես, Օրենսգրքը, տեղամասային ընտրական հանձնաժողովին անհատական իրավական ակտ ընդունելու լիազորությամբ օժտելու հետ միաժամանակ, այդ ակտերն ուժի մեջ մտնելու հստակ ժամկետներ չի սահմանել, սակայն այդ ակտերով սահմանված իրավական հետևանքների վրա հասնելու անհապաղ բնույթի մասին մատնանշումներ է պարունակում: Նախ, Օրենսգրքը սահմանում է, որ նշված որոշումների կատարումն ապահովում է հանձնաժողովի նախագահը: Անհապաղ գործելու հրամայականն էլ պայմանավորված է Օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնակարգմամբ, որի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է քվեարկության ընթացքում ապահովել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների կատարումը և անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատել տեղամասային կենտրոնում»: Նշված վարչական ակտերը միջամտող վարչական ակտեր են, և ընդունվում են հանձնաժողովի նիստերին և քվեարկության ընթացքում անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատելու համար:

Սույն հոդվածում ներկայացված դատողություններից բխում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթը կարգավորվում է ոչ թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ընդհանուր կանոններով, այլ ունի իր առանձնահատկությունները: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի համար նախատեսված այս առանձնահատկությունները պայմանավորված են ընտրական գործընթացի բնույթով, որի կազմակերպման և անցկացման առանցքը քվեարկության գործընթացն է: Վերջինս իրականացվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգի ներքո՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից:

Եզրակացություն

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները հանդիսանում են լիիրավ վարչարարու-

թյուն և վարչական վարույթ իրականացնող մարմիններ, իսկ վերջիններիս կողմից իրականացվող վարչական վարույթը կրում է էական առանձնահատկություններ:

Ավելին՝

- տեղամասային ընտրական հանձնաժողովներին բնութագրական առանձնահատկությունները կարելի է դիտարկել Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների համար սահմանված առանձնահատկություններից էականորեն տարբերվող,

- տեղամասային ընտրական հանձնաժողովները՝ որոշ գործառույթներ իրականացնելու համատեքստում համարվում են վարչական մարմիններ,

- գիտագործնական հարթությամբ առաջադրված եզրահանգումները կյանքի կոչելու համար Օրենսգրքում հարկ է կատարվեն փոփոխություններ և լրացումներ տեղամասային ընտրական հանձնաժողովներին վերաբերող վարչարարության մասով օրենսդրական բացերն ու իրավական անորոշությունները վերացնելու առումով: Մասնավորապես, Օրենսգրքի 47-րդ հոդվածը հարկ է վերնագրել ոչ թե «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի առանձնահատկությունները», այլ «Ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները»: Նույն հոդվածի 1-ին մասում սահմանված հետևյալ դրույթը՝ համաձայն որի. «Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում», նպատակահարմար է փոփոխության ենթարկել հետևյալ կերպ՝ «Ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»: Կարծում ենք, որ հենց այս փոփոխությունը կհանդիսանա ելակետային և կհստակեցնի տեղամասային ընտրական հանձնաժողովների կարգավիճակը՝ որպես վարչարարություն և վարչական վարույթ իրականացնող մարմին՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով հանդերձ և չի հանգեցնի սխալ եզրահանգումների:

Ամփոփագիր: Հոդվածում ուսումնասիրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչարարության և վարչական վարույթի արդի հիմնահարցերը: Տրվել են հիմնավորումներ այն մասին, որ տեղամասային ընտրական հանձնաժողովները նույնպես հանդիսանում են վարչարարություն և վարչական վարույթ իրականացնող մարմիններ, իսկ դրանց կողմից իրականացվող վարչական վարույթն առանձնանում է ընտրական գործընթացին և հանձնաժողովների գործառույթներին բնորոշ առանձնահատկություններով:

Հոդվածի շրջանակում ուսումնասիրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների դերն ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգում, հստակեցվել է վերջինիս կարգավիճակը՝ որպես պետական և վարչական մարմնի՝ հիմք ընդունելով տարբեր գիտնականների ուսումնասիրություններն ու դիրքորոշումները, վեր են հանվել ընտրական օրենսդրության թերություններն այդ համատեքստում, առաջարկվել են լուծումներ: Հոդվածում անդրադարձ է կատարվել ընտրական հանձնաժողովների գործունեության սկզբունքներին, տեղամասային ընտրական հանձնաժողովների լիազորություններին, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների նշանակման կարգին, հանձնաժողովների անդամներին ներկայացվող չափանիշներին ու օրենսդրությամբ առկա թերություններին՝ առաջարկվելով լուծման կառուցակարգեր:

Վերը նշված առանձնահատկությունների առավելություններն ու թերություններն ուսումնասիրելու համար, համալիր հետազոտվել է տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի և վարչարարության փոխհարաբերակցությունը: Կատարված հետազոտության արդյունքների վերլուծությամբ ար-

տացովել են դիրքորոշումներ, ներկայացվել են նշված հիմնահարցին վերաբերող ընտրական օրենսդրության հնարավոր փոփոխություններին առնչվող առաջարկությունները՝ առկա հիմնահարցերի լուծման և ողջամիտ հստակեցման նպատակով:

Annotation. The article examines the current issues of administration and administrative proceedings carried out in precinct electoral commissions. Substantiations are provided to show that precinct electoral commissions also serve as bodies conducting administration and administrative proceedings, and that these proceedings carried out in precinct electoral commissions are carried out with the peculiarities characteristic of the functions of precinct electoral commissions.

Within the framework of the article, the role of precinct electoral commissions in a three-tier system of electoral commissions is studied. The status of the latter as both a state and an administrative body is clarified based on the research and views of various scholars. Shortcomings in the electoral legislation in this context are identified, and corresponding solutions are proposed. The article addresses the principles of activities of the electoral commissions, the powers of the precinct electoral commissions, the procedure for appointing their members, the criteria presented to commission members, and the shortcomings in the legislation, while also proposing mechanisms for their solution.

In order to study the advantages and disadvantages of the above-mentioned peculiarities, comprehensive research is conducted on the relationship between administrative proceedings and administration carried out in precinct electoral commissions. The analysis of the results of the conducted research reflected positions and presented proposals for possible amendments to the electoral legislation related to the mentioned issue, with the aim of resolving existing issues and providing reasonable clarification.

Аннотация. В статье исследуются актуальные проблемы администрирования и административного производства, осуществляемого в участковых избирательных комиссиях. Обосновано, что участковые избирательные комиссии также являются органами, осуществляющими администрирование и административное производство, и что административное производство в участковых избирательных комиссиях осуществляется с особенностями, характерными для функций участковых избирательных комиссий.

В статье рассматривается роль участковых избирательных комиссий в трехуровневой системе избирательных комиссий, на основе исследований и позиций различных ученых уточняется статус последних как государственно-управленческого органа, отмечаются недостатки избирательного законодательства в этом контексте и предлагаются пути их решения. В статье рассматриваются принципы деятельности избирательных комиссий, полномочия участковых избирательных комиссий, порядок назначения членов участковых избирательных комиссий, предъявляемые членам комиссий критерии, а также недостатки в законодательстве, предлагаются механизмы их решения.

С целью изучения преимуществ и недостатков вышеуказанных особенностей было проведено комплексное исследование соотношения административного производства и администрирования, осуществляемого в участковых избирательных комиссиях. Анализ результатов проведенного исследования отразил позиции и представил предложения по возможным изменениям избирательного законодательства по указанной теме с целью разрешения существующих проблем и представления обоснованных разъяснений.

Բանալի բառեր - ընտրական, վարչարարություն, վարչական ակտ, վարույթ, հանձնաժողով, օրենք, օրենսգիրք, վարույթի առանձնահատկություն:

Keywords: electoral, administration, administrative act, proceedings, commission, law, code, peculiarity of proceedings.

Ключевые слова: избирательный, администрирование, административный акт, производство, комиссия, закон, кодекс, особенность производства.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք: Ցուցումներ և բացատրական զեկույց (ընդունված՝ ԵԽ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կողմից 52-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում, 2002 թ. հուլիսի 5-6 և հոկտեմբերի 18-19), Ստրասբուրգ 30.10.02 թ., կարծիք N190/2002:
2. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք. ընդունվել է 2016 թ. մայիսի 25-ին. ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդ. 456:
3. Սահմանադրական դատարանի 2002 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-389 որոշումը (https://concourt.am/decision/decisions/63a9407b3bd63_sdv-389.htm):
4. Козлова, Е.И., Кутафин О.Е., Конституционное право России: Учебник. М., Юрист, 1995, 479 էջ:
5. Авакьян С.А., Конституционное право России: Учебный курс. В 2 т., Т. 1, М., Юрист, 2005, 719 էջ:
6. Попович С., Административное право. Общая часть. М.: Прогресс, 1968, 540 էջ:
7. Խրոպանյուկ Վ. Ն., «Պետության և իրավունքի տեսություն» (2-րդ հրատարակություն, լրացումներով, ուղղումներով), «Գոշ հրատարակչություն», Երևան 1997, 433 էջ:
8. Колоткина О. А., Морозова А. С., Ягофарова И. Д., Теория государства и права: Учебное пособие. Москва: Инфра-М., 2021. 405 էջ:
9. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք. ընդունվել է 2004 թ. փետրվարի 18-ին. ՀՀՊՏ 2004.03.31/18(317), հոդ. 413:
10. Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշում (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97968>):
11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգն ընդունելու մասին» N 36-Ն որոշում:

Վարազյան Լ. - Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական վարչության իրավաբան, էլիասցե՝ lil-eph@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 15.04.2025 թ., տրվել է գրախոսության 15.04.2025 թ., երաշխավորվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունք տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: